

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԲԱՆ ՇԱՀԱԻԷՏ ԵՒ ՕԳՏԱԿԱՐ ԱՄԵՆԱՅՆ ՄԱՐԴԿԱՆ

ՅՈՒՂՎԱՆՆԵՎ ԳՒՌԻՆՆԵՐ

ԺԿ. գարու առաջին կիսուն ծաղկող մի քանի կրօնաւորներէն մին է Յովհաննէս Կառնեցի: Ան ունէր ինքնատիպ կեանք, և ջերմ քարոզիչ մըն էր հաւատքի և բարոյականի: Զեռագիրներու մէջ իր անունով կը գտնուին չարք մը գրուած քնիւր: Քանի մը տարի առաջ հրատարակած էինք անոնցմէ մին «Արատ Կրօնաւորաց» խորագրով (Սիոն, 1953, էջ 318—321): Ներկայ գրութիւնը, օրինակուած Ս. Աթոռոյս թիւ 732 և 792 ձեռագիրներէն, ունի պարզ և դիւրամատչելի ոճ, և զուրկ է ուղարատ արտայայտութիւններէ:

Արդ՝ որ ցանկայ և փափաքէ անանց կենացն և անվախճան փառացն՝ հաստատեցէ զկեանսն յայսմ աշխարհի և զանց աւրացէ ասունքն զփառս անցաւորս:

Որ ցանկայ դրախտին փափկութեան՝ աստ մի փափկասցի մարմնով:

Որ կամիցի աղբիւր ընդ հրէշտակսն՝ աստ մի նստցի ի հրապարակս:

Որ սիրէ սրտիւ զՏէր Յիսուս՝ աստ տնքակ մնացէ ի նման(ց)է անարատ սրբութեամբ:

Որ փութայ մտանել ի յառազատսն լուսոյ՝ աստ բառնայ ընդ ինքեան զիւզն որդմութեան:

Որ երկնչի յանվախճան որդոնցն՝ աստ մի յաճատեցէ լիզուաւ զեղբայր իւր:

Որ զարհուրի ի բորբոքեալ բոցոյն՝ աստէն զբոց նախանձու շիջուացէ յիւրմէ:

Ով որ վախենայ յարտաքին խաւարէն՝ աստ ընդ խաւար միզաց մի շրջեսցի:

Ով երկնչի ի լաւ աչաց և ի կրճտել աւտամանց՝ աստ մի ցամաքեցուցէ յաչաց իւրոց զվտակա արտասուաց:

Որ սարափէ յաններկի տանջանաց՝ աստ լացցէ անդադար ի տուէ և ի զիշերի:

Որ զողայ յաններկի պատուհանէն՝ աստ մի ժտեսցէ զօրհանապազ:

Որ կամիցի երթալ զերկայն ուղին՝ աստ պատաստեսցէ զպաշար ճանապարհին:

Որ կամիցի անդատ և անդատապարտ մնալ ի դառն և յահեղ դատաստանի՝ աստ մի գատապարտեցէ զեղբայր իւր:

Որ պարտական է իւրում Տեառն բիւրքանքարոյ՝ աստ թողցէ իւր նմանոյն զյիսուն և զհարկուր:

Որ կամի ընդ չարութիւն աշոցն անցանել յերկինս՝ աստ խնդրեսցէ ի Տեառն իւրմէ զօգնութիւն:

Որ ցանկայ անանց պատկին՝ աստ համբերէ ամենայն վշտաց և նեղութեանց:

Որ կամիցի զերծանել ի բոցածաւալ ծովէն՝ աստ ծովացուցանէ զաչս իւր արտասուօք:

Որ կամիցի անվաւ և անվաւ զգետն հրեղէն՝ աստ յաճախէ որդմութիւն:

Որ ցանկայ մտանել յանվրէպ վայելչութիւնն՝ աստ մի հեղգացցի(ն) երթալ ի անս հիւանդին:

Որ յօժարէ լսել զձայնն երանաւետ, որ առէ՝ ազնիւ ծառայ բարի և հաւատաւորիմ, աստ մի խցցէ զանկանսն ի խնդրողացն զորդմութիւն:

Որ ախորժէ զայն ժառանգէ զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ, աստ զգեցեսցէ անդադար հայցմամբ:

Որ կամենայ ըմբել յաղբերէն կենաց՝ աստ մաքուր և անարատ կացցէ յաղտիզի ցանկութեանց:

Որ կամիցի մտանել յանտրտում հարսանիսն՝ աստ յօրինէ զհարսնարանին:

Որ փութայ յազենալ երեւել փառաց Փրկչին՝ աստ արգարանալ ջանայ ի մեղաց:

Որ կամենայ քաղցր և ախորժ լսել զբարբառ փողոյն՝ աստ մի արասցէ անտես զձայն օտարաց և կարօտեոց:

Որ կամիցի յամպս օգոց վերանալ ընդ առաւ Տեառն՝ աստ յառաջեալ կանխեսցէ ընդ առաջ աղքատաց:

Որ զարհուրի ի բանիցս Տեառն՝ աստ ժրասցի առնել զհաճոյս կամաց Տեառն իւրոյ:

Որ ակն ունի զալստեան Տեառն իւրոյ հարսանեացն՝ աստ արթուն կացցէ ի յերեւոյն, ի մէջ գիշերին, ի հաւախօսին, և յառաւօտին. այս է ի մանկութեան, և յերիտասարդութեան, և յալեոքութեան, և ի ծերութեան:

Որ կամենայ դասակից լինել 'հրեշտակաց' աստ մի ակորթեցե՛ք նստել ի հրապարակս մարդկան։ Զի հրապարակն ազրիւր է մեղացան, և հրապարակասիրութեամբ ոչ գերածանխ ի մեղաց, ասէ Սողոմոն։

Արդ, ով հղաբար իմ, իմաստուն մտօք իմացարուք զոր տուցի սակաւութ. և զոր ասելոց եմ կարճառօտիւ, պահեա առ քեզ [զ]խորին խորհրդով և հոգայ։

Զի, որ աստ ոչ հոգայ վասն մեղաց իւրոց՝ անդ հոգայ ի հուր գեհնին, ուր ոչինչ օ[գ]յալ է։

Որ աստ հեշտ և փափուկ կա՞՞նք անդ չառաջար տանջի անհուն հեծութեամբ։

Որ աստ անխորի խնդէ՛ք զորովայնն անյապարար՝ անդ խաշի և մաշի անմխիթար։

Որ աստ յլովզ զմայլի գին[ւ]ով՝ անդ կաթիլ մի ջրոյ ծարաւ։

Որ աստ յորանայ զցայտ և զցեղեկ դանդաղ յեղեղ քնով՝ անդ անքուն որդանցն վտանգի տապնապեալ։

Որ աստ ծիծաղի անյապ և անառակ՝ անդ լայ և ողբայ մերկ և խաղառակ։

Որ աստ պարծի քաջախօսութեամբ՝ անդ պապանծի յանդիմանութեամբ։

Որ աստ սովեալ է պահօք՝ անդ զովեցի ամենայն սրբովք։

Որ աստ սովորեալ է յանիծանել՝ անդ լսէ զլինէն երթայք անիծեալք։

Որ աստ կրօնիքն կեղծաւոր լինի՝ անդ ընդ մէջ հատանի և ընդ անհաւատն խառնի։

Որ աստ խռովարար է և ռիսակալ՝ անդ զատարարուն ժառանգեսցէ։

Որ աստ բարձրայօն է և ամբարտաւան՝ անդ իջանէ ի խորրո հնդցին։

Որ աստ մախայ ընդ աշխոյ բարեկեցութիւնս՝ անդ չառնու զվարձս վաստակոց իւրոց։

Որ աստ դանդաղկոտ է յաղօթս՝ անդ որոշի ի սուրբ յաղօթականացն։

Որ աստ անխորի է ի մեղս՝ անդ մտանէ ի տուգանս և ի տանջանս։

Որ աստ հարկանէ զմարդ կամ զանասուն անողորմ՝ անդ հարկանի հրեղէն գաւազանաւ։

Որ աստ կշտապնդի կերակրովք՝ անդ կշտամբի ի հրեշտակաց։

Որ աստ չապաշխարէ զիւր չարխն՝ անդ փակին դրունք ապաշխարութեան։

Որ աստ ոչ բառնայ գրեռն և զկարիւրս զմաց՝ անդ բառնայ զբոցն բորբքեալ։

Որ աստ ոչ վաստակէ ի բարխն՝ անդ ոչ վաշիլէ ի խոտացեալ բարխն։

Որ աստ ոչ ընդունի զօտարո, զորոս և զայրիս՝ ոչ մտանէ ի յարկն հանգստեան։ Որ աստ փակէ զգուժ իւր ի անանկաց և անյարկաց՝ անդ փակի նմա դուռն առաւատին։

Որ աստ մարտաւանէ և սնափառէ՝ անդ կորանայ և այրի ի հուրն անչէջ։

Որ աստ չհոգայ վասն մեղաց իւրոց՝ անդ հեծեալ կոծի դառն հեծութեամբ։

Որ աստ զանձն իւր պրգար կարծէ՝ անդ ընդ կեղծաւորսն ի հուրն անկանի։

Որ աստ զմեղս ընկերին իւրն չհաճարի և ցաւակցաբար ապաշաւեսցէ՝ անդ ընդ նոսին պարտաւորի։

Որ աստ աշխոյ մեղս բարբառէ և կամ հրապարակէ՝ անդ անգրին հրապարակին դատապարտի։

Որ աստ չտայ զչահիւն [զհաշիւն] ընդ ոտիւնն՝ անդ չկարէ զերծանել ի գոտաւորէն։

Որ աստ զօր մահուն մոռանայ՝ անդ պաշարեալ տանջին զնա անողորմ։

Որ աստ ցասկոտ է և բարկացող՝ անդ բարկութիւն Աստուծոյ կայ և մնայ ի վերայ նորա։

Արդ, ով որդեակք իմ, զգուշացարուք իմաստութեամբ և փախերուք յամենայն փոքր և ի մեծամեծ սղաւանաց. վասնզի այսօրքիւք ամենայնիւ սատանայ պարտէ զամենեւեան։

Արդ, որդեակք, մի գրօնուր արեղաւանս այսօրքի և մի մոռանար զծաղումն արեղաւանն արգարութեան։

Մի ընկենուր ի մաց քոց զժամ վախճանին քո և մի հեռի համարեր զօրն անագին և զպատախաճառութիւն ըստ գործոց։

Մի վստահանար յանցաւոր կեանս աշխարհիս և մի պատրիկ խաբեայ երեւելօք կենցաղոյս։

Մի տար դու աշաց արտասուաց և մի պակասեցին ի քէն պաղատանք վասն սխալանաց քոց։

Մի գաղարիկ յաղօթից և մի գանդաղեր ի բարեգործութեանց։

Մի լինիր յոյլ և ծոյլ և մի սովոր
բացիր լինել անձնադիր և փափակաց։

Մի զբոլեցես զմեզ օտարաց և մի
փոքր և թթիվ համարիր յայնցանս քո։

Մի ասիր զուսմեքէ, և մի բնաւ զուսմեքէ։
Մի խօսիր զայն որ ոչ է քեզ յօգուտ և

մի լսեր զայն որ ոչ է քեզ շահ և ոչ Աս-
տուծոյ ընդունելի։

Մի խօսեսցիր բերան քո զգործս որդւոց
մարդկան, և զմեռած մարդն մի բամբասեր։

Մի հեղգար ի տքնութեան և մի ձանձ-
[ը]անար ի մտաւոր ազօթիցն։

Մի լինիր վաշխառու, և փոխատու աշ-
խարհականաց։

Եթէ եկեղեցական իցես մի օթիր ի տօնս
[տունն] աշխարհականաց, առանց ընկերի։

Մի ստանար քեզ քոյրգիր, և մի սնաւ-
մայր, և մի մայրգիր, և մի խոտովանա-

ղուսոր։

Մի ծածկեսցիս ընդ այլ ի ներքոյ միոյ
կարպետի, և մի դիցես զլուխ ընդ այլում
ի վերայ բարձի միոյ սնարին։

Մի բամբասիր զօք ընդ առն բամբա-
սողի, և մի բարկանար ընդ առն բարկա-
ցողի և զայրացկոտի։

Մի զններ զգէմականանց, և զգեղ պատ-
կերաց արուաց։

Մի անձի մտաւ զվարս աշխարհակա-
նաց, և մի ստանար քեզ ոսկի և արծաթ
ազահութեամբ։

Մի լինիր հպարտ և ամբարտաւան, և
մի անցանէ զքե ժամանակ աղօթից քո։

Մի արհամարհեսցես զփոքր և զմեծ ոք,
կամ զխեղ, կամ զլսև, կամ զկոյր, կամ
զկաղ, կամ զհրահողոտ, կամ զայլ ոք
յայսպիսեաց ի մարդկանէ։

Մի երգնուր սուտ կամ իրաւ, և մի
զնիցես ականջ անոցիկ որ զրուցեն զմեզս
այլոց սուտ և կամ իրաւ։

Մի պատուհասակած արանցես զծերս
կամ զպառաւունս և կամ զայլ ոք ի տկա-
րագունից։

Մի խրատեր զմարդ ոք հպարտ և զիշ-
խան։

Մի ընկենուր օռաջի մարդոյ խուխ կամ
խըլիք, և մի ձգտար ձեռօքդ, և մի հպար-
տանար ոսկերք անձինդ, և մի յօրանջնա-
ցին բերանաբաց իբրև յիմար։

Մի սովորիր ննջիլ ի տուն և ի գիշերի,

և մի յաճախիր ի միս և ի գինի, զի այն
ուսկացէ կերակուր և ոչ եկեղեցականաց,
ի հաց ուտելն մի ձայնեսցէ բերան քո, և
մի ծափծափեսցեն ատամունք։

Մի լինիր զիմադարձ և բամբասող իշ-
խանաց և ձեռնաւորաց։

Մի լինիր ծոյլ և հեղգուծեամբ գործեր
զգործ տէրունի։

Մի առնուր զայլոց եղեալ, և ոչ դօտա-
րաց բանալ։

Մի մոռանար զկատարած, այլ զիր ա-
ռաջի աչացդ զձայն անհղ զաբրիէլեան փո-
ղոյն, և զկոչումն առաջի անաւոր ատենին
Բրիտանիա։

Ած զմտաւ զանաշառ դատաստանն, և
զանկաշառ դատաւորն, զքննութիւն դա-
տաստանին և զհատուցումն ըստ գործոց։

Համատարած ծովն հրդեհմամ և զըն-
թաց հրդէն գետոյն։

Ջարձարծումն կայծականց և զբարկու-
թիւն բորբոքեալ բոցոյն։

Ձձայն առգնալուր որ ասէ թէ Ոչ գի-
տիմ զձեզ. և զանդարձ ճանապարհն ի
խաւարն արտաքին։

Ձանդադար լալ աչացն, և զանհանգիստ
կրճրտումն ատամանցն։

Ջատատկութիւն սառնամանեացն, և զա-
հագնութիւն անքունս որդեանցն։

Արդ, ով եղբարք, զմտաւ ամէք զայս
ամենայն, և զաղցաւոր կենցաղս ձեր աշ-
խարհեցէք։ Վայ տուք անձանց և եղուկա-
սացէք ձեզ, ջանացարուք և հնարեցարուք
զերծանիլ յայնմ ամենայնէ։

Արդ, ով եղբարք, հրաժարես յամենայն
մեղաց և ի չարեաց։ Աստ ջանայ, աստ
ճգնեալ, աստանօր հաշտեցոյ ընդ քեզ զՏէրն
քո, և ապրիցիս յայնմ անպնդութենէն։
Դանդիլ այն կեանքն սակաւուց է, և տշնո-
ցիկ է փառքն և պսակն որ աստ վաստակին։

Եւ արդ եթէ կամիս զերծանիլ յայնմ
ամենայնէ որ լինիեցէ, և և հասանիլ խոս-
տացեալ բարեացն, զու զգոյշ լիր խորհր-
դոց, բանից և գործոց, և փոխանակեա
ընդդէմ զնեղով չարեացն զբարիոն։ Ընդդէմ
մեղացն՝ զարդարութիւն, բարկանալոյն՝
զհեղութիւն, անդամութեան՝ զհանդար-
տութիւն, թշնամեացն՝ զբարեբարութիւն,
անհնազանդութեան՝ զհնազանդութիւն,
ստահակութեան՝ հաւանութիւն, անժուժկա-

լուծեան՝ զժողովակույթիւն, յիսակալու-
թեան՝ զառօրսակալութիւն, նախանձուհի՝
զբարեկամութիւն, ատելութեան՝ զսէրն,
դառնութեան՝ զքաղցրութիւն, դատար-
կութեան՝ զաշխատանքն, պարապ կալոյն՝
զգործակալութիւն, մեղմխաւացն՝ զպար-
զամտութիւն, խարդախանացն՝ զմիամտու-
թիւն, ծիծաղելոյն՝ զլալն և զարտասուելն,
անյուսութեան՝ զյոյսն, արտամութեան՝ զու-
րախութիւն, ի փորձութիւնն՝ զերկայն-
մտութիւն, ի վիշտն՝ զհամբերութիւն, ա-
ղահուծեան՝ զչափաւորութիւն, քնչախ-
րութեան՝ զանընչութիւն, փառասիրութեան՝
զարհամարհանս, պատուասիրութեան՝ զան-
պատուութիւն, թերահաւատութեան՝ զհա-
ւատածաբարութիւն, թուլութեան՝ զքաջութիւն:

Ջայս բանս խրատու արասցես ըստ կարի
քում, և ուսուցանես արթոժողացն զսա,
և զայլն զոր ոչ գրեցի: Մի հեղգասցիս
յամենայն բարի վաստակոց. քանզի սա-
կաւ բանքս յիշատակ են մեծամեծ պատ-
ուիրանացն Աստուծոյ:

Հրատ. Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

ՆՈՒՇՐԷՎԱՆ ՔԱՎԱՌՈՐԻ ԽՐԱՏՆԵՐԷՆ

1. — Անձնահաճ մարդ ինձմէ հեռու պոնեգե՛:
2. — Բանգէ մարդոց դէմ անպատեհ խօսք մի՛ խօսի՛:
3. — Քիչ խոսացե՛ք եւ անելի կատարեցե՛ք:
4. — Ով որ խոսք կը սիրէ՞լայն խոսեցե՛ք:
5. — Չեր հոգիւն՝ ձեր մարմինի՛ն ծառայ մի՛ րնէ՛ք:
6. — Օսար՝ մարդու քան մէջ քանութիւնք մի՛ րնէ՛ք:
7. — Այս կեանքը շատ սիրող մարդեր մի՛ սիրէ՛:
8. — Մարդու եւ կնոջ, կամ ծառային եւ սիրոջ միջեւ բանասիրութիւն մի՛ րնէ՛ք:
9. — Թագաւորին հանդէպ զոչոց կեցե՛ք. թեպէ՛ս ան խոնարհի, դուք մի՛ համարձակի՛ք:
10. — Ինչ բանքն ձեր արհիւ մէջ չկալ զայն լեզուով մի՛ խօսի՛ք:
11. — Երեսարարութեան ժամանակ ծերութիւնը մի՛սք թելէ՛ք:
12. — Չեր քեանմին խիստ մի՛ արեմամբնէ՛ք:
13. — Չեր իտրեղակիցը բարեութեան ժամանակ փորձեցե՛ք:
14. — Ջայն քնկիւն ճանչեցե՛ք որ ձեզի ցաւակից կ'ըլլայ՛:

ԳՐԱԽՈՍՆԵԿՆ

“ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ Ի

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ 562 ԼԵԶՈՒՆԵՐԻ”

Ն Ե Ր Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՀՐԱԶԵԱՑ ԱՃԱՌՆԱՆ — Երեւան — 1955, էջ 655

9. — Սարտեհն: Աճառեան չի յիշատա-
կեր այս լեզուն, որ կը խօսուի Սարտինիոյ
մէջ և ունի շատ մը բարբառներ: Լօկուտո-
րիականը կամ Նուորիականը՝ կեդրոնական
մասին մէջ, գամբրիտանիականը՝ հարաւային
շրջանը, կալուերիականը և սասարիականը՝
հիւսիսը: Այս վերլիկները մեծապէս խա-
լահանացած են և Գուրիքայի հարաւային
բարբառներուն հետ շփման մէջ են: Senu
P. E. Guarnerio, Il dominio sardo, Rev.
dial. rom.ի մէջ, III, 1911, էջ 192–231;
G. Bottigliani, Studi sardi, Rassegna critica
e bibliographica (1913–1925), Rev. Lingu.
rom. II, 1926, էջ 208–262; M. L. Wag-
ner, La lingua sarda, Berne, 1950; A.
Meillet & M. Cohen, L. M., էջ 49, 74:

10. — Գաղթածին լեզուներ: Աճառեան
չի յիշատակեր այս իւրայատուկ լեզուները:
Բորթուգալիէնը, սպաներէնը և Ֆրանսի-
էնը յարաբերութեան մէջ մանելով բնիկ
կամ ներածուած (Անթիլիան) լեզուներու
հետ, ծնունդ տուած են զանազան խառ-
նածին լեզուներու, որոնցմէ շատերը քա-
ւական լաւ ուսումնասիրուած են: Սափելի
– բորթուգալիէնը՝ Կանաչ Հրուանդանի և
Բորթուգալիական Կուրիիոյ, Սէլլանի մէջ
խօսուող հնդիկ – բորթուգալիէնը՝ գաղ-
թականներու շառաւիղներու կողմէ, Գու-
րաշառի խափշիկներու papiamentոն, Հա-
յիթիի, Մարիս կղզիի գաղթածին լեզուները
և այլն: Վերջապէս, պէտք է յիշատակել
նաև մասնաւոր լեզուները, այսօր անհետա-
ցած, որոնք կը գործածուէին Միլերիկականի
նաւահանգիստներուն մէջ. ասոնք կը կոչուէին
Սապիր կամ lingua franca. ասոնց մէջ Ֆրան-
սերէն, խալիերէն, սպաներէն տարբը կա-
րհոր տեղ մը կը գրաւէ: Senu H. Schu-